

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»



ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Մ.Գ.Մանուչարյան
23 մայիսի 2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Քրիստինե Մուրադի Թաթոսյանի «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Լիանա Խաչատրյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Ռոբերտ Սարինյան՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., Աշոտ Մարկոսյան՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆ., Բեյլա Գաբրիելյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ստեփան Պապիկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Ալվարդ Մատինյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, Լիանա Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ապակենտրոնացման գործընթացները մեծ դեր և նշանակություն են ստանում հատկապես այն երկրներում, որտեղ իրականացվում են վարչատարածքային բարեփոխումների ակտիվ գործընթացներ: ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների գործընթացը մեկնարկել է 2011 թվականից, երբ ընդունվեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը, ինչը հիմնավորում էր ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների իրականացման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Համայնքների խոշորացման ավարտից հետո ֆինանսական և վարչական ապակենտրոնացման գործընթացների խորացման

նախադրյալների գնահատման շրջանակներում համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման, ծախսերի կառավարման տնտեսական արդյունավետության մակարդակների, լիազորությունների և դրանց կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հնարավորությունների համաչափության, ինչպես նաև ՀՀ համայնքների տեղական տնտեսական զարգացման վրա ապակենտրոնացման ազդեցության գնահատման և, ըստ այդմ, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկների մշակման անհրաժեշտությամբ էլ պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է գնահատել ՀՀ համայնքներում վարչական և ֆինանսական ապակենտրոնացման առկա մակարդակը, վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա՝ առաջարկելով ՀՀ համայնքներում լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների արդյունավետության բարձրացման ուղիներ: Տվյալ նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- վերլուծել ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները՝ խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածի տվյալների կտրվածքով,
- հետազոտել ապակենտրոնացման մակարդակի հաշվարկի և լիազորությունների ապակենտրոնացման համակարգի միջազգային փորձը, ինչպես նաև լիազորությունների ապակենտրոնացման շրջանակներում ֆինանսական ռեսուրսների ապահովմանն ուղղված մեխանիզմները,
- գնահատել ՀՀ խոշորացված համայնքների ծախսերի արդյունավետության մակարդակը՝ մեկ շնչին բաժին ընկնող որոշ ծախսատեսակների համադրման միջոցով,
- համեմատաբար սկզբնական փուլերում խոշորացված ՀՀ համայնքներում հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների հիման վրա մշակել խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն,
- բացահայտել համայնքների ղեկավարների լիազորությունների՝ ոչ ամբողջ ծավալով իրականացման հիմնական խոչընդոտները և մշակել դրանց արդյունավետության գնահատման գործիքակազմ,

- իրականացնել գործոնային վերլուծություն ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա,
- մշակել ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ,
- Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակը բնութագրող ցուցանիշների փոփոխության ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա,
- բացահայտել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման համակարգի գործող վիճակը, ներկայացնել ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում.

- ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա մշակվել է գործոնային վերլուծության իրականացման մոդել, որի միջոցով հնարավոր է բացահայտել համայնքների տեղական տնտեսական զարգացման հնարավորությունները: Մոդելը կարող է կիրառվել ՀՀ համայնքներում երկարաժամկետ տեղական տնտեսական զարգացման ուղղությունների արդյունավետ պլանավորման համար:
- Մշակվել է համայնքների ղեկավարների լիազորությունների իրականացման արդյունավետության գնահատման գործիքակազմ, ՀՀ խոշորացված 64 համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հարցումների հիման վրա՝ գործոնների հարաբերական կարևորության կշիռների ստացման մեթոդով: Գործիքակազմը թույլ է տալիս ՀՀ համայնքներում բացահայտել լիազորությունների արդյունավետ իրականացմանը խոչընդոտող հիմնական գործոններ:
- Մշակվել է ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ, ինչի հիման վրա առաջարկվել է ՀՀ համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակի վրա խոշորացման ազդեցության գնահատման

մեթոդաբանություն՝ համայնքներում եկամուտների և ծախսերի՝ ՀՆԱ ցուցանիշով կշռված ապակենտրոնացման ինդեքսների կիրառմամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորոյթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության գործոն»** գլխում ուսումնասիրվել է լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների փորձը կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող աշխարհի մի շարք երկրներում, ինչպես նաև ապակենտրոնացման մակարդակի և վերջինիս՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման միջազգային պրակտիկայում առկա գործիքակազմերը և դրանց՝ ՀՀ խոշորացված համայնքներում կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ վարչապարածքային բարեփոխումների ազդեցությունը ապակենտրոնացման գործընթացների կազմակերպման և իրականացման վրա»** գլխում վերլուծվել են ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները, փորձ է արվել գնահատել խոշորացման ազդեցությունը համայնքների ծախսերի կառավարման արդյունավետության վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«Ապակենտրոնացման գործընթացի կազմակերպման և իրականացման քանակական գնահատման հիմքերը»** գլխում ՀՀ խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական ցուցանիշների հիման վրա իրականացվել է գործոնային վերլուծություն, մշակվել է հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ՝ փորձելով գնահատել վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման ցուցանիշների վրա, ինչպես նաև մշակվել է եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման չափման մեթոդաբանություն:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ, որոնք ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Համայնքների հետ առնչվող հարցերը հանրապետության տնտեսագետների շրջանում վաղուց պատկանում են ամենաարժարժվող թեմաների շարքին: Ատենախոսության այն մոտեցումը, թե «մինչ օրս չի իրականացվել նմանօրինակ վերլուծություն» թվում է չափազանցված է, եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ հրապարակի վրա են եղել և շրջանառության մեջ են դրվել Յու.Սուվարյանի, Վ.Հարությունյանի, Մ.Մելքումյանի, Ա.Թամազյանի, Ա.Ազիզյանի և շատ այլ հեղինակների աշխատությունները:
2. Ատենախոսության մեջ արտասահմանյան այլ և այլ երկրների քննարկվող թեմատիկայի հետ կապված փորձի զուգահեռները, հաճախ տեղական պայմանների համեմատության մեջ ցուցադրում են հակադիր դրսևորումներ, որոնցում հաշվի չի առնվում տեղական պայմանների առանձնահատկությունները: Օրինակ, էջ 41-ում մի դեպքում նշվում է Շվեդիայի և Հայաստանի ՏԻՄ-ի զարգացման տարբեր ուղղությունների մասին և ապա, թե վերջինս կարող է օրինակ ծառայել ՀՀ-ի համայնքների խոշորացման համար: Նույն համատեքստում են՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի և նման այլ օրինակները:
Ընդհանրապես, արտասահմանյան երկրների փորձի վերաբերյալ համեմատությունները, իրենց դրական կողմերով հանդերձ, հաճախ պարունակում են արհեստականության տարրեր:
3. Հեղինակը փորձ է արել մշակելու ՀՀ համայնքներում հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակի գնահատման մեթոդաբանություն և վեր հանել հիմնական մարտահրավերներն ու խոչընդոտները: Ըստ այդմ, տեղական տնտեսական զարգացման ազդեցության առումով, համայնքների խոշորացման եզրահանգումներում տրվել է ավելի շուտ դրական գնահատական, թեև հաճախ տեղաշարժերի իրական ցուցանիշներն ու արդյունքները փաստում են հակառակ միտումներ (ինչպես օրինակ, էջ 81-ում ներկայացված համայնքներին օրենքով վերապահված պարտադիր խնդիրների լուծման կատարողականի արդյունքները (աղ. 26): Չի կոնկրետացվել նաև այն կարևորագույն հարցը, թե որ կետից հետո հարկաբյուջետային ապակենտրոնացումը կարող է բացասաբար ազդել տնտեսական զարգացման վրա:
4. Աղ. 2.4 (էջ 74) Չարենցավան համայնքի աշխատանքի վարձատրությունը նախքան խոշորանալը կազմել է 13,2-14% , իսկ խոշորացումից հետո՝ 17-21%: Մինչդեռ վերլուծության մեջ (էջ 76) նշվում է, որ դրանք քիչ տեսակարար կշիռ են

կազմել ընդհանուր ծախսերում:

5. Ատենախոսն առաջարկում է պիլոտային ծրագրի շրջանակներում իրականացնել եկամտային հարկի առավելագույնը 10%-ի չափով մասհանում: Սակայն աշխատանքում չի հիմնավորվում այդ տոկոսադրույքի մեծությունը, որքանո՞վ այն կլուծի համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրները, արդյո՞ք այն կիրառելի է բոլոր համայնքներում:
6. Հեղինակի կողմից 64 խոշորացված համայնքներում անցկացվել են հարցումներ միայն ղեկավարների շրջանում, մինչդեռ ՏԻՄ-ի աշխատակիցների և փորձագետների ներգրավումը թույլ կտար ընդհանրացումները դարձնել առավել համապարփակ: Ինչպես նաև խոշորացման արդյունավետությունը գնահատելիս շահեկան կլինե՞ր հարցումներ կատարել նաև բնակչության շրջանում, որի վրա են անմիջականորեն ընկնում խոշորացման սոցիալ-տնտեսական հետևանքները:
7. Ցանկալի էր, որ համայնքների խոշորացման ազդեցության գնահատման ցուցանիշներում կատարվող տեղաշարժերը, առավել տեսանելի դարձնելու համար, հետազոտության մեջ օգտագործվեին նաև վերջին երկու տարիների տվյալները:
8. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման կարևոր խնդիրներից է համայնքային ծառայողների վերապատրաստման կատարելագործումը, որը ատենախոսության մեջ պատշաճ ձևով չի քննարկվել:
9. Հետազոտությունը զերծ չէ որոշակի տեխնիկական բնույթի թերություններից՝ կիսատ, անհարթ մտքեր (էջ 107), կրկնվող նախադասություններ և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողություններից ելնելով՝ կարող ենք փաստել, որ աշխատանքն ունի մի շարք թերություններ, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել ատենախոսության որակի վրա:

Քրիստինե Մուրադի Թաթոսյանի «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (<< նյութերով)» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է տեղական տնտեսական զարգացման վրա ապակենտրոնացման ազդեցության բացահայտմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակված 10 (տասը) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը և խնդիրներին:

Քրիստինե Մուրադի Թաթույանի «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (ՀՀ նյութերով)» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 10 (տասը) հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը՝ խորհրդում բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի կլինի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (23.05.2025թ., արձանագրություն թիվ 6):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
ավագ գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ա.Գ.Մատինյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
կրտսեր գիտաշխատող,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Լ.Ա.Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ ավագ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Մատինյանի և նույն ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Լ.Հարությունյանի ստորագրությունների իսկությունը «հաստատվում են»՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ
գիտ. քարտուղար,
տնտեսագիտության թեկնածու
«23» մայիսի, 2025թ.

Կ. Տ.

Կ.Ա. Հակոբյան

